

ՔՐԻՍՏՈՆԵԱՆՆԵՐԸ (ժերայրած փառնչի շարժումին տակ)։ Ամէն։

ՓԱՆՈՒԻԼ. Կը յաւուրի եթերը։ Հրեշտակներուն թռիչքը կը բարձրէ մեր վերել։ (բարեպաշտ և յափշտակուած անխոխուսի մը երկայն յոռքեկեկ յետոյ, բարձր ձայնով)։ Վեր բարձրացուցէք սրտերնիդ։

ՔՐԻՍՏՈՆԵԱՆՆԵՐԸ (ցեծոքեամբ) Ամէն։

ՓԱՆՈՒԻԼ. (Քրիստոնէականերուն ամբոյսին մէջ կը մտնէ)։ Կողջադուրեմ զձեզ սուրբ համբարով մը։ (կը սկսի երբայ յամբարայ դեպ ի խորք՝ պանայաններուն անձնատուր ըլլալու համար)։

ՌՈՒԲՐԻԱ (Փառնչի առջեւ կը կրկնուի, հեզօրէն և արտասուցազիւ)։ Այսպէս կը թողուս բերիս վրան հրաժեշտի հրատուր արցունքը։

ՓԱՆՈՒԻԼ. Կին գու, շրթունքներս մահկանացու կաւէ են։

Կ'անցնի, առանց համբուրելու զանիկա։ Յետոյ տեսնելով որ Ռուբրիան առանձին կը մնայ, հետու իրեն հետեւող ամբոյսէն, կը յանելու։

Գուն միայն կը մնաս։

ՌՈՒԲՐԻԱ (հագիւզ զգայի ձայնով մը)։ Այո։ ՓԱՆՈՒԻԼ. (իրեն ընկերող Քրիստոնէականերուն շառնարով)։ Երգեցէք Աստուծոյ։

Կիները ժողոված են բոլոր ծաղիկները և կը ցամեն զամոնք Փամուէի անցած սեղը երգելով և հեռամարտով ձիվաստանին ծառերուն մէջ։

ՔՐԻՍՏՈՆԵԱՆ ԿՆՆԵՐԸ. Ո՛հ տուէք վարդեր լի լի ձեռքերով, արթուն հարսեր, փեսան կու գայ։ Մերկացուցէք բլրակները, հովիտներն ու պարտէզները, ծաղիկներ սղջերուն վրայ, ծաղիկներ սիրոյ բարեպաշտի ցնորքին։ Մաղիկներ վիշտին, ծաղիկներ մարտիրոսութեան...

Ռուբրիան սրբաւէզին մէջ միայն մնացած է։ Երբը հեռամարտով կը մուտղի։

ՌՈՒԲՐԻԱ (Աչքով փառնչի քայլերը դիտելէն յետոյ)։ Այո, քեզ փրկելու համար։ Բայց իմ երազս խորտակուեցաւ։ (Կը կարկնի աղբիւրին կեղերթիկ)։ Հոս դրաւ իր ձեռքը... (և կը համբռնօրէն քարոյ՝ այն տեղէն ուր դրած է անիկա)։ Հոս համբարը... և արցունքը։ (Կ'ընկէ։ Ականջ կը դնէ քրիստոնէայ երգին որ ջանի կ'երթայ կը կորուսի հետուն)։

ՀՆՈՒԱՌՈՐ ԵՐԳԸ. Ո՛հ, տուէք շուշաններ լի լի ձեռքերով, և վայրի ծաղիկներ հերմակ ու կարմիր։ . . . . .

ՌՈՒԲՐԻԱ. Քաջը երազ մը, սուրբ երազ մը եղաւ։ Հեռուն, հեռուն, մեռող երգին մէջ կը լսեմ զայն դեռ... . . . . .


ՀՆՈՒԱՌՈՐ ԵՐԳԸ. Զուարթ է ան որ կը մեռնի ճշմարիտ Աստուծոյն համար։ Փրկուած է ան որ կը հաւատայ։ Սէր, Սէր, Սէր... . . . . .

ՌՈՒԲՐԻԱ. Կը լսեմ զայն դեռ... և կ'երգէ։ Սէր, Սէր... (լսանալով վերջին ձայներն, նստկրկնայ)։ Կը լսեմ զայն դեռ... (երկար յոռքեկեկ

յետոյ, ցաւագին կերպով)։ Ալ չեմ լսեր... (և կ'իյնայ ծռակներուն վրան)։

Վերջ երբորդ արարուածին։

Թարգմ. Հ. ԱՐՄԵՆ ԴԱԶԻԿԵԱՆ



# ԱԶԳԱՅԻՆ ՅԱՌԱԶԱԴԻՄՈՒԹԻՒՆ

ՏՕՔԹ. ՊՊՂՈՍ ՔՕԼՕԼԵԱՆ ԵՒ ԻՐ ՆՈՐ ՀՐԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

**Ա**ՆՀԵՏԱՅՈՂ տարւոյն վերջի շարժումն բժշկական թերթերուն մէջ ուրախութեամբ կարգացինք, թէ՛ աօքթ. Պօղոս Քօլօլեան փարիզաբնակ ծանօթ ջլատարոյժը, Դեկտեմբեր 2 16ին փարիզու բժշկական կաճաօին (Académie de Médecine) տարիկան մրցանակարաշխութեան հանդէսին մէջ վարձատրութեան արժանացեր է։ Հերու ալ արգէն յարգելի բժիշկը Académie de Médecineէն պատուուեցաւ (Prix Baillarger) կաճաճ մրցանակով, և ահա այս տարի կը ստանայ ուրիշ մը (Prix Deporte) մրցանակը, իւր մէկ նոր աշխատութեան համար, զոր փարիզեան թերթերը մեծ գովեստներով ծանուցին անցեալ տարի։

Հայ բժիշկներու մէջ առննով աօքթ. Յովսէփ Պէյրանն եղած է միայն, որ կէս դար առաջ կըրցած է՝ փարիզ հաստատուելով մեծ յառաջադիմութիւններ ընել, և բժշկական ընտիր հրատարակութիւններով արժանի ըլլալ Académie de Médecineի այլ և այլ վարձատրութիւններուն. Պէյրանէն ի վեր առաջին Հայ բժիշկն է կարծեմ աօքթ. Քօլօլեան, որ ֆրանսացի բժիշկներու հոծ բազմութեան մը մէջ, կը յաջողի Հայ անունն արժանացունել փարիզու բժշկական բարձրագոյն կաճաօին ծափերուն, և այլու ըլլալ մեծապէս պատուարեր արդի Հայ բժշկութեան։

Հրապարակաւ կը շնորհաւորեմ ուրեմն զինքն իւր այս յառաջադիմութեանն համար, կը շնորհաւորեմ մանաւանդ այն աշխատու-